

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/11

23 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Ունիվերսալ-1» ԱԿ 14.01.2016 թ-ի գանգատը հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու վերաբերյալ:

«Ունիվերսալ-1» ԱԿ գանգատում բերված փաստարկները.

«Ունիվերսալ-1» արտադրական կոդաբերատիվը (այսուհետ նաև կոդաբերատիվ) պետական գրանցում է ստացել 27.03.1995թ-ին (գրանցման համար՝ 16.080.00091, վկայական թիվ 01Ա 009336):

06.08.2010թ-ին կոդաբերատիվը համապատասխանեցվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և նույն օրը հաստատվել է նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

1995թ-ին պետական գրանցումից հետո կոդաբերատիվը գործունեություն չի իրականացրել:

«Ունիվերսալ-1» ԱԿ-ն չնայած 1995թ-ից հաշվառված էր Աշտարակի ՏՀՏ-ում, սակայն վերջինիս կողմից 1995թ-ից ի վեր կոդաբերատիվին չէր տրամադրվել հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ նաև ՀՎՀՀ):

Հարկային տեսչության կողմից ՀՀ Կառավարության 07.06.1995թ-ի թիվ 321 որոշման հիման վրա ընդունված ՀՀ Հարկային տեսչության 07.02.1996թ-ի թիվ 81 հրամանով հաստատված կարգի համաձայն դեռևս 1996թ-ին կոդաբերատիվին պետք է տրամադրվեր հարկ վճարողի հաշվառման համար (որոշումը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 20.12.2007թ-ի թիվ 1514-Ն որոշմամբ):

Հետագայում հարկային տեսչությունը «Ունիվերսալ-1» ԱԿ-ին պետք է ՀՎՀՀ տրամադրեր համաձայն 11.10.2007թ-ին ընդունված «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 01.01.2008թ-ին):

19.06.2015թ-ին դիմում է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն խնդրելով կոդաբերատիվին տրամադրել հարկ վճարողի հաշվառման համար, սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունից տրվել է պատասխան առ այն, որ հարկ վճարողի հաշվառման համարները տրամադրվում են ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալության միջոցով:

Հետևելով ՀՀ ֆինանսների նախարարության գրությանը կոդաբերատիվը դիմել է ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալություն, որտեղից ի պատասխան հայտնվել է, որ հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը նախատեսված չէ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև դուրս է ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության իրավասությունների շրջանակից:

Ստանալով ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պատասխան գրությունը «Ունիվերսալ-1» ԱԿ-ն

09.11.2015թ-ին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ ֆինանսների նախարարության Աշտարակի ՏՀՏ՝ խնդրելով «Ունիվերսալ-1» արտադրական կոդպերատիվին տրամադրել հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ):

Ի պատասխան կոդպերատիվի 10.11.2015թ-ի դիմումին 30.12.2015թ-ի թիվ 11-1/42817-15 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ իրավասու չէ հարկ վճարողներին տրամադրել հարկ վճարողների հաշվառման համար, իսկ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ-ի կողմից որևէ պատասխան չի տրվել և ոչ էլ տրամադրվել է ՀՎՀՀ:

«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթների վերլուծությունից հետևում է, որ հարկ վճարողների հաշվառումն իրականացվում է հարկ վճարողի հաշվառման համարների տրամադրման միջոցով, ինչպես նաև, որ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալության կողմից «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ինքնաշխատ կերպով ՀՎՀՀ-ի շնորհումը իրականացվում է նոր ստեղծվող նոր պետական գրանցում ստացող կազմակերպություններին, այն էլ հարկային մարմնի տրամադրված, իսկ «Ունիվերսալ-1» արտադրական կոդպերատիվը նոր ստեղծվող և նոր պետական գրանցում ստացող իրավաբանական անձ չէ, այլ այն պետական գրանցում է ստացել դեռևս 27.03.1995թ-ին, իսկ 06.08.2010թ-ին համապատասխանեցվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքին:

Իսկ «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը հստակ և առանց որևէ վերապահումների սահմանում է, որ պետական գրանցում ստացած կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք հաշվառվում են իրենց տարածքի հարկային մարմնում (տեսչությունում)՝ ըստ իրենց գտնվելու վայրի կամ ըստ իրենց բնակության վայրի:

Փաստորեն ստացվում է մի իրավիճակ, որ ոչ ՀՀ ֆինանսների նախարարությունը և ոչ էլ պետական ռեգիստրի գործակալությունը իրավասու չեն կոդպերատիվին տրամադրել ՀՎՀՀ, մինչդեռ կոդպերատիվը ՀՀ գործող օրենսդրությամբ գրանցված կազմակերպություն է և ցանկանում է իրականացնել գործունեություն, ներկայացնել հաշվարկ-հաշվետվություններ, բացել բանկային հաշվե համարներ և այլն, որոնց համար ուղղակի անհրաժեշտ է ՀՎՀՀ, սակայն ՀՎՀՀ չտրամադրելով պետական մարմինների կողմից կոդպերատիվի բնականոն գործունեությանը ցուցաբերվում է արհեստական խոչընդոտ, որի պայմաններում կոդպերատիվը կրում է վնասներ, մասնավորապես տարբեր անձանց հետ ունի գործարքներ կնքելու առաջարկներ (օֆերտա), որոնց ակցեպտավորման համար անհրաժեշտ է ՀՎՀՀ, որը սակայն հարկային տեսչությունը կոդպերատիվին չի տրամադրում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում

հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ 1997թ-ին գրանցում ստացած մեկ այլ կազմակերպությանը 2015թ-ին ՀՀ ՖՆ էրեբունու հարկային տեսչության կողմից տրամադրվել է ՀՎՀՀ:

Նշվածով վարչական մարմնի կողմից անհավասար մոտեցում է ցուցաբերվել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, մասնավորապես՝ «Ունիվերսալ-1» արտադրական կոդպերատիվին ՀՎՀՀ-ի տրամադրումը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է հանձնարարել տարածքային հարկային մարմնին՝ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ-ին, «Ունիվերսալ-1» արտադրական կոդպերատիվին տրամադրել հարկ վճարողի հաշվառման համար:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ունիվերսալ-1» արտադրական կոդպերատիվը պետական գրանցում է ստացել 27.03.1995 թ-ին (գրանցման համար՝ 16.080.00091, վկայական թիվ 01Ա 009336), իսկ 06.08.2010թ-ին կոդպերատիվը համապատասխանեցվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և նույն օրը հաստատվել է նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

1995թ-ին պետական գրանցում ստանալուց հետո կոդպերատիվը գործունեություն չի իրականացրել:

Կոդպերատիվը 19.06.2015թ-ին դիմում է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն խնդրելով տրամադրել հարկ վճարողի հաշվառման համար, սակայն դիմումը մերժվել է՝ պատճառաբանելով, որ հարկ վճարողի հաշվառման համարները տրամադրվում են ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալության միջոցով:

Այնուհետև նույն պահանջով կոդպերատիվը դիմել է ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալություն, սակայն դիմումը մերժվել է՝ պատճառաբանելով, որ հարկ վճարողի հաշվառման համարի տրամապրումը նախատեսված չէ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև դուրս է ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության իրավասությունների շրջանակից:

Ստանալով ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պատասխան գրությունը «Ունիվերսալ-1» ԱԿ-ն նույն պահանջով կրկին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, սակայն պատասխան գրությամբ հայտնվել է, որ հարկային մարմինը ներկայումս իրավասու չէ հարկ վճարողներին տրամադրել հարկ վճարողների հաշվառման համար:

Տվյալ դեպքում ստացվում է մի իրավիճակ, երբ գործող օրենսդրությունը, ըստ էության, չի կարգավորում նախկինում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստացած անձին ներկայումս ՀՎՀՀ տրամադրելու գործընթացը: Մինչդեռ, կոդպերատիվը պատրաստակամ է իրականացնել տնտեսական

գործունեություն և սահմանված կարգով վճարել գործունեությունից առաջացող հարկային պարտավորությունները: Սակայն, առանց հարկ վճարողի հաշվառման համար ստանդու և հարկային մարմնում հաշվառվելու կոոպերատիվը գրկված է նման իրավունքից:

ՀՀ հարկային տեսչության 07.02.1996թ. թիվ 81 հրամանի հավելվածով սահմանված «ՀՎՀՀ տրամադրման քարտի» կապակցությամբ հարկ է նշել, որ նշված հրամանն ընդունվել էր ի կատարումն ՀՀ կառավարության 07.06.1995թ. թիվ 321 որոշման, որն ուժը կորցրել է 01.01.2008թ-ից ՀՀ կառավարության 20.12.2007թ. թիվ 1514-Ն որոշմամբ:

Հանձնաժողովը գտնում է, որ հարցին լուծում տալու նպատակով ՀՀ կառավարության 07.06.1995թ. թիվ 321 որոշման և ՀՀ հարկային տեսչության 07.02.1996թ. թիվ 81 հրամանի դրույթներն անհրաժեշտ է կիրառել հետադարձ ուժով:

Քննարկվող դեպքում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ սույն գործին առնչվող միևնույն փաստական հանգամանքների առկայության պայմաններում մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի տրամադրվել է հարկ վճարողի հաշվառման համար: Մասնավորապես, «Իշխան» ՍՊԸ-ն պետական գրանցում է ստացել 25.04.1997 թ-ին, սակայն էրեբունու ՀՏ կողմից նրան հարկ վճարողի հաշվառման համար է տրամադրվել 2015 թ-ին:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ կոոպերատիվի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. «Ունիվերսալ-1» ԱԿ 14.01.2016 թ-ի գանգատը բավարարել:
2. ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ-ին՝ «Ունիվերսալ-1» ԱԿ-ին տրամադրել հարկ վճարողի հաշվառման համար:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

